

տուցուած զոհեր են, զուարթամիտ մտօք
ընծայաբերուած :

Կը յայտնեմ առթիւս իմ սրտագին շնոր-
հակալութիւնը Ձեզ, որ քաջալեր հանդի-
սացաք ինձ ձեռնարկելու այս գիտական
ուղեւորութեանս : Է. Ն. Ա.

ՍՏՈՒԳԵՐԸՆԵՎԸՆ ԿԵՐԳԻՆԸ, ԿԵՐԳՐՆԵՐ

Լատիներէն *cardo* (*սեռ. cardinis*) կը
նշանակէ ծխնի. փոխաբերաբար կը գործա-
ծուի նաեւ դարձկէտ, արեւադարձակէտ,
գլխաւոր կէտ իմաստով : Ասկէ ածանցուած
է միջնադարեան լատիներէնի մէջ *cardi-*
nalis, իտալ. *cardinale*, ֆր. եւ ղերմ.
cardinal, գլխաւոր, աւագ իմաստով, որ կը
կիրարկուէր թէ իբրեւ տիտղոս եկեղեցա-
կան աստիճանաւորի մը (սարկաւագ, քա-
հանայ), վանքի մը գլխաւորի, եւ թէ ածա-
կանաբար «կարդինալ-ական ատաքինու-
թիւնք», *les vertus cardinaux* : ԺԲ. դարէն
ետքը արեւմուտք յատուկ տիտղոս նկա-
տուեցաւ ան Քահանայապետական Դիւա-
նին գլխաւոր պաշտօնեաներուն, որոնք
իբրեւ խորհրդական կամ նուիրակ կը պաշ-
տօնավարէին նոյն Դիւանին մէջ :

Բառս *cardinalis* (*cardinale*) յոյն
դրուածքներու մէջ տառագարծուած է
καρδινάλιοι եւ *καρδιναριοι* (*Mansi, Conc.*
coll. XVI, 974 եւ շար.) : այսպէս նաեւ
հայ գրականութեան մէջ կը գտնենք գրուած
«կարդինալ» եւ «կարդինար», «կարդի-
նարական ատաքինութիւնք» եւ այլն : Լ-ի
չըջումը բի կը տեսնենք ոսմկորէն լեզուի
մէջ ալ. հմմտ. գտեր է, գտել է, գտեալ է
աշխ. գտած է : Է. Ն. Ա.

† 3. ՎՐԹԱՆԷՍ Վ. ՓՈՒՆԿՈՒՅԵԱՆ

Տարույս օգոստոս 13ին Բուդապետ
հանգեալ ի Տէր Միաբանութեան անդամ
է. Վրթանէս Վ. Փունկուցեան :

Հանգուցեալը ծնած է Կերլա հայա-
բաղաւէն ոչ շատ հեռու Սիկ գիւղը (Տրան-
սիլվանիա) 31 օգոստոս 1888, կնքուած
Անտոն անունով : Եկած էր Միքիաբեան
վանքս 11 հոկտ. 1899. քահանայ ձեռնա-
դրուած 11 մայիս 1911, ստանալով Վրթա-
նէս անունը :

Եռանդուն եւ աշխոյժ ոգւոյ տէր,
գործեց դպրոցական ասպարէզի վրայ
Կ. Պոլիս 1912—1930 շրջանին : 1931ին վե-
րադարձաւ Վիեննա եւ երեք տարի յաճա-
խեց Համալսարանի փիլիսոփայական բա-
ժինը : 1934, դեկտ. 12ին ուղարկուեցաւ
Բուդապետ հովուելու տեղւոյն կաթո-
ղիկէ հայ, յատկապէս հունգարահայ ժողո-
վուրդը : Միաժամանակ յանձն առաւ դասա-
խօսել Համալսարանին մէջ հայերէն լեզուն :

Կ. Պոլիս համբաւուեցաւ իբրեւ բեմբա-
սաց : 1914—1918 տարիներուն գործեց
նաեւ իբրեւ զինուորական քահանայ նոյն քա-
ղաքին մէջ գտնուած հունգարական գործին :

«Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրու-
թիւնը իր շնորհակալիքն ունի իրեն հան-
դէպ, որ առթիւ Ուսումնաբերքին 25 ա-
մեային պատրաստեց 25 ամեայ շրջանին
ընդհանուր ցուցակը : Այս ցուցակը կը
բաղկանար երկու մասէ. Ա. Հեղինակներ
եւ Յօդուածներ. Բ. Ցանկ յատուկ անուն-
ներու եւ գիտական նիւթերու. Ա. մասը լոյս
տեսաւ 1912ին. Բ. մասի տպագրութիւնը
ընդհատեցաւ բերմամբ պարագաներու :

Հանգիստ յախտեանկան իր հոգւոյն :
Է. Ն. Ա.

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Ուղարկուած Խմբագրութեանս)

Աբեղեան Ա., Դորպատի հայ ուսանողու-
թիւնք : Վիեննա, տպ. Միքիթ. 1942,
8⁰, էջ 44 : [Աղղ. Մատենադարան, ճՄ :]
Գինն՝ գ. Ֆր. 1.— [1
Ալպոյանեան Արշակ, Հայ եպիսկոպոսի մը
ատաքելութիւնը ի Հապէշիտան ժե-
զարուն : Պատմական նշմարներ : Գա-
հրէ, տպ. Նոր Աստղ, 1946, 8⁰, էջ
152 : [Հրատարակութիւն Թ. 6՝ Մտաու-
րական սպասարկութեանց գրաս-
նեակի :] [2

Աղգատեց Եղիազար Տ., Երեք հազարի
երազը. Իրավէպ մտերիկահայ կեանքէ :
Նիւ Եորք, տպ. Եփրատ, 1945, 8⁰, էջ 56 :
[Եփրատ Մատենաշար Թիւ 2 :] Գին՝
սէնթ — .60 : [3
Անէմեան Գեղամ, Սիլվա. Թատերախաղ
հինգ արար (իբրական կեանքէ) : Փարիզ,
տպ. Արաքս [1946⁰], էջ 103 : [4
Ասատուրեան Դոկտ. Հայկ, Հայաստան :
Արիական նախադիրք ատաշաւոր Ասիա-



յում: Սոֆիա, տպ. Ռահվիրայ, 1942, 80, էջ 292: [5]

Արարատ նոր երգարան. պատրաստեց Միլերտիչ Պարսամեան: Ներածութիւն՝ Շաւարշ Նարդուհի: Փարիզ, տպ. Արաքս (Գրատուն Մ. Պարսամեան), [1946] 80, էջ 256 + 16 (գրացուցակ): [6]

Արարատեան Ա., ճշմարտութիւններ Կովկասի մասին: Պուքրէշ, տպ. Հայ Մամուլ, 1941, մեծ 80, էջ 44 + 1 քարտէջ: [7]

Արզի հայ գրականութիւն (Ժողովածու): Ա. հատոր, Փարիզ 1939: Բ. հատոր, Արտասահմանի գրողներ, Փարիզ 1941, 80, էջ 224: Գ. հատոր, Հայաստանի գրողներ: Փարիզ, [1941], 80 էջ 248: [Հայ գրագէտներու բարեկամներու մատենաշար, Թ. 1—3:] [8]

Արծրունի Վահրամ, Գլխաւոր մատենագիրներ հայկական դպրութեան Դ.—Ի. դար: Հայ վարժարաններու բարձրագոյն դասընթացներուն եւ զարգացելոց համար: Աղեքսանդրիա, տպ. Ա. Ստեփանեան, 1944, 80, էջ 196: [9]

Բակունց Ակսել, Պատմութիւններ: Ա. Շարք: Փարիզ, 1938, տպ. Արտիստիկ, 80, էջ 80: [Հայաստանի գրականութիւն մատենաշար, Թ. 1:] [10]

Բաշալեան Լեւոն, Նորագէտներ եւ պատմութիւններ: Ներածութիւն Արշակ Զօպանեանի: Փարիզ, տպ. Արաքս [1946], 80, էջ ԻԳ + 272: [Հրատ. Հ. Բ. Ը. Միութեան. Մելգոնեան Մատենաշար:] [11]

Բեռնշթայն Հիլի, Այց մը Բերքտեհագոյնի թրգմ. Տ. Փաշալեան (Բնորեալ ցեղր կամ Գերմանիա): Բոստոն, տպ. «Հայրենիք», 1946, 80, էջ 60: Գին՝ \$ 1.—: [12]

Բուտրու Էմիլ, Գերմանիա եւ պատերազմը, թրգմ. Տ. Փաշալեան — Բնորեալ ցեղր կամ Գերմանիա: Բոստոն, տպ. «Հայրենիք», 1946, 80, էջ 60: Գին՝ \$ 1.—: [13]

Գարսեան Վ., Հինէն ու նորէն, սարէն ու ձորէն: Փարիզ, տպ. Արաքս, [1942], 80, էջ 80: [14]

Գարսեֆիլեան Հ. Գ., Համառօտ ընդհանուր պատմութիւն ի պէտս բարձրագոյն նախակրթարաններու: Մասն Ա. Հին դար: Գահիրէ, տպ. Հ. Մանսուր, 1944, 80, էջ 162: Մասն Բ. Միջին դար. Գահիրէ, տպ. Հ. Մանսուր, 1946, 80, էջ 183: [15]

— Հուսկ րանք. խօսուած Գահիրէի վիենն. Միլիթարեան Վարժարանի 1946 տարւոյ շրջանաւարտներուն: Գահիրէ, տպ. Հ. Մանսուր, 1946, 80, էջ 15: [16]

Գիլիսանդարեան Ա., Ազգային շարժումների գրգայատմանները ԺԹ. գարում: Փա-

րիզ, տպ. Արաքս, 1939, 80, էջ 32: [Նոր Մատենաշար, Թ. 1:] [17]

— Կովկաս. երկիրը, Ժողովուրդը, պատմութիւնը: Գարտէջ եւ բաղմամբիւ վիճակագրական տւեալներ: Ա. Մաս: Պարիս, տպ. Թիւրքեան, 1943, 80, էջ 269 + 1 Գարտէջ: [18]

— Յեղափոխական հայուհիներ: Ա. Մաս: Փարիզ, տպ. Արաքս, 1939, 80, էջ 64: [Նոր Մատենաշար, 2:] [19]

Գրական զեղարվեստական Ժողովածու: Հրատարակութիւն «Հայաստան» շաբաթաթերթի խմբագրութեան: Բեռլին 1943, 80, էջ 79: [Հայ լեզուականի գրագարան. գիրք Թ. 1:] Նոյն շարքէն՝ Թ. 4: Բեռլին-Փոստգամ 1944, 80, էջ 143: [20]

Գրացուցակ [Մ. Պարսամեան Գրատուն], 1939—1945 պատերազմի տարիներուն Փարիզի մէջ լոյս տեսած հրատարակութիւնները: Փարիզ, տպ. Արաքս [1945], 80, էջ 8: [21]

Գրացուցակ [Մ. Պարսամեան գրատուն] Փարիզ, տպ. Արաքս [1946], 80, էջ 16: [22]

Դիոնիսիոս Բարսալիբի, Հակաճառութիւն Հայոց դէմ: Թարգմանեց ասորի ընագրէ Հ. Դկա. Պողոս Էսապալեան: Վիեննա տպ. Միլիթ. 1938, 80, էջ 112: [Ազգ. Մատենադարան, ձեռն] Գինն՝ Գ. Փր. 1.20: [23]

Դպրոցական Երգարան. պրակ Բ. եւ Գ. Գահիրէ տպ. Նեղոս, 1935—1936, 80, էջ 32 + 32: [24]

Եղիայեան Հ. Ե., Ոսկեփորիկ հայերէն ուղղագրութեան (ճոցի համար): Պլովդիւ, տպ. Սիփան, 1941, 120, էջ 68: [25]

Եղիշեան Վարդան, Աստուածարեալ Քաղաք (Նշխարներ): Փարիզ, տպ. Ա. Տէր-Յակոբեան, 1939, 80, էջ 256: [26]


— Խառնարան, ճշմարտաբօղ Ծիծաղներ. Փարիզ, տպ. Արաքս, 1946, 80, էջ 207, Հրտկ. Մ. Պարսամեան, Գինն՝ Փր. 150: [27]

Եսայեան Զայել, Անձկութեան Ժամեր: Սելանիկ, տպ. Ալիք, 1924, 80, էջ 56: [Մատենաշար Ալիք, Թ. 1:] [28]

Երեմեան Ա., Թիֆլիսի հայկական Պանթէոններում: Վիեննա, տպ. Միլիթ. 1940, 80, էջ 110: [Ազգ. Մատենադարան, ձեռն], Գինն՝ Գ. Փր. 1.—: [29]

Զուարթնոց. տարեգիրք: գրականութեան եւ արուեստներու: Խմբագրութեամբ Հրանդ Բալուեանի: Հատոր Բ. Փարիզ, տպ. Արաքս, [1943], 80 մեծ, էջ 351: Գինն՝ 250 Փր. [30]

(Շարունակելի):



“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ,”

Հ Ա Յ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Թ Ե Ր Թ Ի

— Կ Ա . Տ Ա Ր Ի — 1947 —

Կը խմբագրուի և կը հրատարակուի

ՄԻԽԻՏԱՐԻՏԵՆ ՄԵՒՈՐԱՆՈՒԹԵՆՆ ԿՈՂՄԵՆԷ Ի ՎԵՆԵՆԱ

աշխատակցութեամբ ազգային և օտար Բանասերներու :

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ռուսմաքերքս օտարալեզու արեւելագէտներուն, խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր բանասիրական յօդուածներուն համառօտ մէկ ամփոփումը, միջազգային որ և է լեզուով :

Բաժանորդագինն է ամէն երկրի համար՝
5 դոլար, կանխիկ :

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA,”

Wien 62 (Autriche), Mechitaristengasse 4.

Խ Մ Ի Ը Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ս Ա Ռ Ա Գ Ո Ւ Ա Ծ Թ Ե Ր Թ Ե Ր

- Անահիտ. *Հանդէս Մտածման և Արուեստի*: Փարիզ, Նոր շրջան 1940—1946: ԺԱ. և ԺԲ. Տարի: 9, Rue Say, Paris (9).
- Անի. *Ամսագիր Գրականութեան և Արուեստի*: Ա. Տարի 1946: P. O. Box 1239, Beyrouth, Rép. Liban.
- Անի. *Ամսագիր, Գրականութեան, Արուեստի և մարտի*: Ա. Տարի 1946: Celâlbey Han Kapısı, No. 17/1, Bahçekapi, Istanbul.
- Ազգայ. *Շարաթաթերթ*: Ազգային, Քաղաքական և Գրական: ԻԶ. Տարի 1946: 42 Rue de la Jonquièrre, 42 Paris (17).
- Արարատ. *Օրաթերթ Քաղաքական, Գրական, Հասարակական, Թ. Տարի 1946*: B. P. 758, Beyrouth, Rép. Liban.
- Աւետիք. *Ամսական Պաշտօնաթերթ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Տանն Կիլիկիոյ*. ԺԵ. Տարի 1946: Patriarcat Arménien Catholique, Beyrouth, Rép. Liban.
- Արեւմուտք. *Ազգային և Գրական Շարաթաթերթ*: Բ. Տարի 1946: 46, Rue Richer 46, Paris (9).
- Արմենիա. *Երկօրեայ թերթ, Ազգային, Գրական, Քաղաքական և Հասարակագիտական*: ԺԶ. Տարի 1946: El Salvador 4625, Buenos Aires, Argentine.
- Armenia. *Organe de la Jeunesse Arménienne de France, I Année (Nouvelle Série), 1946, 9, Place de la Madeleine, Paris (8^e).*

“HANDES AMSORYA,”

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

— LXI. JAHRGANG — 1947 —

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN

unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges \$ 5.—.

Unsere Adresse:

- Armenian Tribune. Vol. 1, 1946, 40 East 12th Street, New York 3, N. Y.
- Circular Armenian National Council of America, 381 Fourth Avenue, New York 16, N. Y.
- Analecta Bollandiana, t. 61, 62, 63 (1943—1945) Bruxelles, Société des Bollandistes, 24, Boulevard St. Michel.
- Բազմալեզ. *Հանդիսարան բանասիրական, գրական, գիտական, բարոյական*: ԺԴ. Տարի, 1946: St. Lazare, Venise (Italie).
- Բանբեր. *Հոգեւոր Ամսաթերթ Հայ Աւետ. Եկեղեցւոյ, ԻԲ. Տարի 1946*: 7, Rue Père, Marseille.
- Երիտասարդ Հայաստան. *Օրկան Սօցիալ Դէմօկրատ Հնչակեան Կուսակցութեան Ամերիկայի Շրջանին*: ԻԳ. Տարի 1946: P. O. Box 9, Madison Square Station, New York 10, N. Y.
- Ժողովուրդ. *Օրաթերթ Կենդրոնական Օրկան Հայ Ազգային Ճակատի*: Գ. Տարի 1946: 66, Rue Mouffetard, Paris (5).
- Ժողովուրդի Ձայն. *Օրաթերթ*: Թ. Տարի 1946: B. P. 633, Beyrouth, Liban.
- Լրաբեր. *Երկօրեայ թերթ, Հրատարակութիւն Ամերիկահայ Յասակագիտական Միութեան*: Ը. Տարի 1946: 40 East 12th Street, New York 3, N. Y.
- Կէս Կատակ, Կէս Շիտակ. *Կիսամտայ Երգիծաթերթ*: Բ. Տարի 1946: 9, Rue Saulnier, Paris (9^e).